ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2012թ. N 393

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 146-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի N444-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի ղեկավար ընտրված Արայիկ Աբասյանի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի հրաժարականը.

որոշում եմ՝

1. 2012 թվականի հոկտեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքում նշանակել համայնքի ղեկավարի նոր ընտրություն:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***